

# Նորաշեն

Մակերես՝ 14,13կմ<sup>2</sup>

Բնակչություն՝ 1157

Տնային տնտեսությունների թիվը՝ 350: Գյուղ Տաշիրի տարածաշրջանում, Տաշիր քաղաքից 10 կմ հյուսիս-արևելք, մարզկենտրոնից գտնվում է 62 կմ հեռավորության վրա: Գյուղի բնակիչների նախնիները եկել են Կարսից, Մուշից՝ 1860-ական թվականներին: Բարձրությունը ծովի մակարդակից 1575 մետր: Կլիման բարեխառն է, ձմեռը երկարատև ու ցրտաշունչ, ամառը զով: Հաճախ են երկարատև անձրեւները եւ կարկտահարությունը: Գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 1157,2 հա, որից՝ 738,5 հա վարելահող, 138,5հա խոտհարք, 236,6 հա արոտ: Ունի միջնակարգ միջնակարգ դպրոց, վթարային վիճակում գտնվող մշակույթի տուն, փոստի բաժանմունք: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են խմելու ջրագծերի ներքին ցանցի վերանորոգումը, մշակույթի տան հիմնանորոգումը, մանկապարտեզի հիմնանորոգումը, գյուղատնտեսական մթերքների իրացումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: Համայնքը սահմանակից է Կրաստանի Հանրապետությանը: